

ՀՀ սիյուռքի նախարարության 2018 թվականի գործունեության հաշվետվությունը

2018 թվականին ՀՀ սիյուռքի նախարարության աշխատանքները իրականացվել են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 1-ի N 1060 - Ա «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր» և ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 11 -ի N 275 - Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» և 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030 - Լ «ՀՀ կառավարության 2018-2022թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշումները, ինչպես նաև ՀՀ սիյուռքի նախարարության կանոնադրությունը:

1. «Հայաստանի Հանրապետությունում սիրիահայերի և իրաքահայերի ինտեգրման գործընթացի արագացում» ծրագիր

1.1. Կազմակերպչական քայլեր

1.1.1. 2018 թվականին թարմացվել են Հայաստան ժամանած և առաջիկայում Հայաստան ժամանել ցանկացող սիրիահայ ընտանիքների ցուցակները (համապատասխան էլեկտրոնային շտեմարանում): Հայաստան է ժամանել 63 սիրիահայ (Հայաստան ժամանած և նախարարություն դիմածների թիվն է):

1.1.2. Նախարարությունում կազմակերպվել է սիրիահայերի ամենօրյա ընդունելությունը: Աջակցություն է ցուցաբերվել նախարարություն դիմած սիրիահայերին՝ վերջիններիս արձանագրման, անհրաժեշտ դիմումներ գրելու, խորհրդատվության և այլ հարցերում:

1.1.3. 2018 թվականի ընթացքում սիյուռքի նախարարություն են դիմել Սիրիայից Հայաստան տեղափոխված 978 սիրիահայեր հետևյալ 997 խնդիրներով, որոնցից 669-ը՝ բժշկական սպասարկման, 128-ը՝ բնակվարձի աջակցության, 58-ը՝ աշխատանքի տեղավորման, 39-ը՝ կրթական, 52-ը՝ իրավական/փաստաթղթային, 51-ը՝ այլ խնդիրներ:

1.1.4. Նշված խնդիրների լուծման նպատակով պատրաստվել և ուղարկվել են համապատասխան գրություններ պետական գերատեսչություններին և գործընկեր միջազգային, բարեգործական ու հասարակական կազմակերպություններին:

1.1.5. Առողջական խնդիրների լուծման համար աջակցության խնդրանքով նախարարությանը դիմած սիրիահայերին ցուցաբերվել է անհատական մոտեցում՝ իրականացնելով կարիքների մանրազնին գնահատում՝ նախքան պետպատվերում ընդգրկելու խնդրանքով ՀՀ առողջապահության նախարարություն գրավոր դիմելը:

1.1.6. Հաշվետու ժամանակահատվածում սիրիահայերի բնակվարձերի փոխհատուցումն իրականացվել է համահայկական, բարեգործական, հասարակական և միջազգային կառույցների (ՀԲԸՄ, Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցության) և անհատ բարերարների համաֆինանսավորմամբ:

1.1.7. Հայաստանում բնակվող սիրիահայերի հիմնախնդիրներին օպերատիվ լուծում տալու նպատակով, ինչպես նաև համաձայն 2018թ. ծրագիր-ժամանակացույցի՝ փետրվարի 23-ին և ապրիլի 13-ին կազմակերպվել են Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստերը, որոնց ընթացքում լսվել է 8 զեկուցում:

1.1.8. ՀՀ կառավարության աշխատակազմ է ուղարկվել *«Սիրիական հակամարտության հետևանքով հարկադիր տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թվականների ռազմավարությանը հավանություն տալու մասին»* ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագիծը և տիտղոսաթերթը: Ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականի՝ նախագիծը կրկին անգամ ուղարկվել է շահագրգիռ պետական մարմիններին: ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ստացվել են բոլոր շահագրգիռ պետական մարմինների առաջարկությունները:

1.1.9. Սիրիահայերին պարբերական իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվել Սփյուռքի նախարարության կողմից:

1.1.10. Հուլիսին արևմտահայերենով տպագրվել է *«Հաճախ տրվող իրավական հարցերի տեղեկատվական ձեռնարկը»*՝ Սիրիայից և այլ հակամարտության վայրերից Հայաստան տեղահանված անձանց համար՝ ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի, Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI), ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության և «Իրավունքի պաշտպանության նախաձեռնություն» հիմնադրամի հետ համատեղ՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի բնակչության, փախստականների և միգրացիայի բյուրոյի ֆինանսավորմամբ:

1.1.11. Օգոստոսին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI), ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակի, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության և «Իրավունքի պաշտպանության նախաձեռնություն» հիմնադրամի կողմից՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի բնակչության, փախստականների և

միգրացիայի բյուրոյի ֆինանսավորմամբ, թարմացվել է «Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկը»:

1.1.12. «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության կողմից ֆինանսավորվող «Ավելի դյուրին ինտեգրում բռնի տեղահանված սիրիահայերի համար արևմտահայերենով» ծրագրի շրջանակներում (որն իրականացվել է «Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն» հիմնադրամի ջանքերով և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան ներկայացուցչության (ABA ROLI) հետ համագործակցությամբ) 2018թ. օգոստոսի 9-ին փախստականների իրավաբանական աջակցման կենտրոնի մասնագետների կողմից տեղահանված սիրիահայերի համար արևմտահայերենով անցկացվել է դասընթաց փոխառության և վարկերի վերաբերյալ:

1.1.13. Հայաստան տեղափոխված սիրիահայերի համար և սիրիահայերի մասնակցությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվել և լուսաբանվել է ՀՀ սիյուռքի նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում, հայաստանյան և սիյուռքյան լրատվական կայքերում:

1.1.14. Պատրաստվել և ԿԳՆ ու Երևանի քաղաքապետարան են ուղարկվել գրություններ՝ հանրակրթական (այդ թվում ավագ դպրոցներում) սովորող սիյուռքահայ, այդ թվում՝ սիրիահայ աշակերտների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Համաձայն Երևանի քաղաքապետարանի և ԿԳՆ-ի միջոցով հավաքագրված տեղեկատվության՝ Երևան քաղաքի թվով 73 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 470 սիրիահայ երեխա, Երևան քաղաքի թվով 46 մանկապարտեզներում սովորում է 86 սիրիահայ երեխա, իսկ ԿԳՆ ենթակայության տակ գործող ՀՀ թվով 54 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում է 174 սիրիահայ երեխա:

1.1.15. ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության համաֆինանսավորմամբ փոխհատուցվել է սիրիահայ ուսանողների 2017-2018թթ. ուսումնական տարեշրջանի ուսումնավարձերի 60%-ի չափով մասնակի փոխհատուցման ծրագրի համակարգման աշխատանքները: 2017-2018թթ. ուստարվա ուսանողների ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցման ծրագրին դիմած շահառուների թիվը կազմում է 441 անձ:

1.1.16. ՀՀ կառավարության, ՀԲԸՄ-ի, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության համաֆինանսավորմամբ փոխհատուցվելու է 2018-2019թթ. ուստարվա սիրիահայ ուսանողների ուսման վարձավճարների 50%-ի չափով, որի վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումն ընդունվել է: Հայտագրվել է 294

ուսանող, որից 47-ի ուսման վարձավճարների 50%-ը՝ մոտ 13 մլն. 700 հազար ՀՀ դրամի չափով փոխհատուցելու է ՀՀ կառավարությունը:

1.2. Հանդիպումներ, միջոցառումներ, հարցազրույցներ

1.2.1. Փետրվարի 6-9-ը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Սիրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում» ծրագրի շրջանակում 7 սիրիահայ գործարարներ գործնական այցելություն են կատարել Գերմանիայի Դաշնային հանրապետություն: Այցի ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել այցելելու գերմանական ընկերություններ և արտադրամասեր, ծանոթանալ գերմանական տեխնոլոգիաներին, ինչպես նաև ներկայացնելու իրենց արտադրանքը՝ նպատակ ունենալով հաստատել նոր գործնական կապեր և հնարավոր համագործակցություն գերմանական կողմի հետ: Սիրիահայ գործարարները հանդիպումներ են ունեցել Ֆրանկֆուրտի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Հայկական պատվիրակությունը հանդիպել է նաև ԳԴՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի հետ:

1.2.2. Մարտի 1-2-ը Հայաստանի Ամերիկյան Համալսարանում «Սիրիահայերի միություն» ՀԿ-ն և «Կանանց ձեռներեցության խթանման և զարգացման կենտրոն» ՀԿ-ն (ՎԵՊԵԿ)՝ Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) աջակցությամբ կազմակերպվել է «Կանանց ձեռներեցության ցուցահանդեսը», որին մասնակցել են նաև սիրիահայ ձեռներեց կանայք:

1.2.3. Մարտի 6-8-ը «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի աջակցությամբ մի խումբ սիրիահայ ձեռագործ և հրուշակագործ կանայք Վրաստանում մասնակցել են վրացահայ համայնքի կողմից կազմակերպված ցուցահանդես-տոնավաճառին:

1.2.4. Նպատակ ունենալով աջակցել սփյուռքահայ ստեղծագործողների կայացմանը Հայաստանի Հանրապետությունում՝ մարտի 27-ին Հայաստանի գրողների միության Մեծ դահլիճում կազմակերպվել է գրող, հրապարակախոս, արձակագիր, ազգային-հասարակական գործիչ սիրիահայ Թորոս Թորանեանի ծննդյան 90-ամյակին նվիրված գրական հանդիսության կազմակերպչական աշխատանքներին:

1.2.5. Ապրիլի 4-5-ը «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի հետ համատեղ (ԵՄ ֆինանսավորմամբ) Կարապի լճին հարող տարածքում Մայրության և գեղեցկության տոնի առթիվ կազմակերպվել է «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» խորագրով սիրիահայերի ձեռքի աշխատանքների և քաղցրավենիքի բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը՝ շուրջ 50 սիրիահայերի մասնակցությամբ:

1.2.6. Ապրիլի 6-8-ը «Սիրիահայերի միություն» ՀԿ-ի աջակցությամբ մի խումբ սիրիահայ ձեռագործ և հրուշակագործ կանայք (20 հոգի) Վրաստանում մասնակցել են վրացահայ համայնքի կողմից կազմակերպված ցուցահանդես-տոնավաճառին:

1.2.7. Ապրիլի 27-ին «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպվող Թեքեյանական 8-րդ օլիմպիադային ապահովվել է սիրիահայ 11 աշակերտների մասնակցությունը:

1.2.8. Օգոստոսի 6-17-ը Սիրիայի պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայ անապահով ընտանիքների (8-14 տարեկան) շուրջ 30 երեխաներ ՀՀ սփյուռքի նախարարության և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի համատեղ նախաձեռնությամբ և «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպության ֆինանսական աջակցությամբ իրենց ամառային հանգիստն են անցկացրել ՀՀ Լոռու մարզի «Գուգարք» մանկական ճամբարում:

1.2.9. Օգոստոսի 29-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում կազմակերպվել է Սիրիայից բերված՝ Այնթափի Բարսեղյան ընտանիքի տոհմական ատրճանակի պաշտոնական հանձնման արարողությունը: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ-ում Սիրիայի և Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանները:

1.2.10. Սեպտեմբերի 19-20-ը «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ, Թումանյան փողոցի և Հյուսիսային պողոտայի հատման կետից մինչև Տերյան և Հին Երևանցու փողոցների հատման կետն ընկած բացօթյա հատվածում կազմակերպվել է սիրիահայերի ձեռքի աշխատանքների և քաղցրավենիքի՝ «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» խորագրով ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը՝ նվիրված ՀՀ անկախության տոնին, շուրջ **40** սիրիահայերի մասնակցությամբ:

1.2.11. Հոկտեմբերի 16-17-ը Հյուսիսային պողոտայում Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Ճանաչել: Պաշտպանել: Իրագործել:» ծրագրի շրջանակում «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ն, սփյուռքի նախարարությունը, ՄԱԿ ՓԳՀ հայաստանյան գրասենյակը և «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ն՝ Կարիտաս Ավստրիայի և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Երևանի 2800 ամյակի առթիվ կազմակերպել են սիրիահայերի ձեռքի աշխատանքների և քաղցրավենիքի՝ «Սիրիահայ մշակույթի շունչը Երևանում» խորագրով ավանդական դարձած բարեգործական ցուցահանդես-տոնավաճառը: Ցուցահանդեսի պաշտոնական բացմանը ներկա է գտնվել ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը: Ցուցահանդեսին իրենց մասնակցությունն են ունեցել շուրջ 50 սիրիահայեր: Տոնավաճառի շրջանակներում հոկտեմբերի 16-ին հնչել

են սիրիահայ երաժիշտների «Նուռ» բենդի՝ քաղաքամայր Երևանին նվիրված կատարումները, իսկ հոկտեմբերի 17-ին՝ սիրիահայ DJ Շանթի ռիթմերը:

1.2.12. Սփյուռքի նախարարության աշխատակիցները մասնակցել են պետական գերատեսչությունների, միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված ավելի քան 30 միջոցառումների, հավաք-հանդիպումների, քննարկումների:

1.3. Այլ աշխատանքներ

1.3.1. ՀՀ սփյուռքի նախարարությունը «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի միջոցով իրականացրել է մի շարք բարեգործական ծրագրեր.

- Իր գործունեությունն է շարունակել ՀԲԸՄ «Վահե Կարապետյան» կենտրոնում գտնվող «Կլաուդիա Նազարյան» բժշկական կենտրոնը, որտեղ սիրիահայերը ստանում են անվճար բժշկական խորհրդատվություն՝ բժշկական կենտրոնում աշխատող սիրիահայ կամավոր բժիշկների կողմից:
- Շարունակվել են «Հայաստանաբնակ կարիքավոր սիրիահայերի բժշկական աջակցություն» ծրագրի շրջանակներում ընթացիկ աշխատանքները և «Իզմիրյան» հիմնադրամի և բժշկական կենտրոնի հետ համագործակցությունը:
- ՀԿ-ի կողմից տրամադրված համապատասխան գրությունների հիման վրա ՀԲԸՄ-ն և Ամերիկայի Հայ ավետարանչական ընկերակցությունը շաւորնակել են ֆինանսական աջակցություն տրամադրել սիրիահայերին՝ վերջիններիս առողջապահական խնդիրների լուծման նպատակով:
- ՀԿ-ի և Գեղագիտության ազգային կենտրոնի պարային ստուդիայի համագործակցության արդյունքում սիրիահայ 30 փոքրիկներ պարային ստուդիայում շարունակել են հաճախել հայկական ազգային պարի դասընթացներին:
- Համաձայն Սփյուռքի նախարարության և «Տաշիր Սթրիթ» առևտրի կենտրոնի միջև սիրիահայերին վաճառքի տարածքներ (սեղանիկներ) տրամադրելու վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածության՝ Հյուսիսային պողոտայի գետնանցումում գործող «Տաշիր Սթրիթ» առևտրի կենտրոնում սիրիահայերի համար հատկացված տարածքում իրենց ձեռագործ աշխատանքները ներկայացնելու ցանկություն են հայտնել շուրջ 50 սիրիահայեր: Վերջիններիս հետ հոկտեմբերի 10-ին տեղի է ունեցել հանդիպում-քննարկում՝ սահմանված արտոնությունից օգտվելու և տաղավարների տրամադրման պայմանների վերաբերյալ: Այս պահի դրությամբ վարձակալության պայմանագիր կնքելու փուլում են սիրիահայ 5 ձեռներեցներ:

- «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի և ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի համընկերությամբ իրականացվող՝ «Սիրիահայերի և տեղաբնակների դիմակայունության բարձրացում» ծրագրի շրջանակներում 100 խոցելի ընտանիքներն առաջիկա երեք ամիսներին կստանան բնակվարձեր 100-ական եվրոյի չափով:
- Շարունակվում է իրականացվել «Ֆուեգո» ընկերության կողմից «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ին տրամադրված կանացի հագուստի՝ սիրիահայերին բաշխման աշխատանքները:
- Շարունակվում է իրականացվել ՀԲԸՄ ֆրանսիայի մասնաճյուղից ուղարկված և ՀԲԸՄ Երևանյան գրասենյակի միջոցով ստացված JOTT վերարկուների՝ սիրիահայերին բաշխման աշխատանքները:

2. «Քայլ դեպի տուն» ծրագիր

«Քայլ դեպի տուն» ծրագիրը մեկնարկել է 2018 թվականին: Այն միավորել է նախարարության «Արի տուն» և «Սփյուռք» ամառային դպրոց ծրագրերը: Դրանք միավորելու որոշումը կայացվել է նոր կառավարության ձևավորումից հետո, երբ որոշակի ճշգրտումներ են մտցվել հաստատված ծրագրերում՝ դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ծրագիրը հաստատվել է Սփյուռքի նախարարի համապատասխան հրամանով:

Մինչ ճշգրտումները, ի պատասխան «Արի տուն» ծրագրին մասնակցելու նախկինում տարածված հայտարարության՝ նախարարություն էին արդեն դիմել որոշակի թվով հայտատուներ, որոնք նախապես գնել էին նաև տոմսերը: Ուստի, հուլիսի 1-ից օգոստոսի 11-ն ընկած ժամանակահատվածում ծրագիրը 4 փուլով իրականացվել է, որին մասնակցել են աշխարհի 16 երկրից ժամանած 13-18 տարեկան 156 սփյուռքահայ պատանիներ: Միևնույն ժամանակ, «Սփյուռք» ամառային դպրոցին մասնակցելու համար դիմել էին 258 սփյուռքահայ:

Արդյունքում, այդ հայտատուները ընդգրկվել են և «Արի տուն» անցումային և «Քայլ դեպի տուն» ճշգրտված ծրագրերում, ինչպես նաև Կրթության և գիտության նախարարության կողմից անցկացվող ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում:

«Քայլ դեպի տուն» ծրագրի նպատակը սփյուռքի պատանիների և երիտասարդների՝ հայկական օրակարգերում ներգրավվածության աստիճանի բարձրացումն էր: Ծրագրի նպատակները բազմաթիվ էին, ուստի և այն կազմվել է մի քանի բաղադրիչներով՝

- ճանաչողական՝ Հայաստանի պատմամշակութային վայրեր և կոթողներ շրջայցերը,
- կրթական՝ հայերենի և հայրենագիտության դասընթացները,
- հանգստի՝ ամառային ճամբարը,
- ինտեգրման՝ հայաստանաբնակ հյուրընկալող ընտանիքներում ապրելը:

Ծրագրին մասնակցել է շուրջ 400 սփյուռքահայ՝ աշխարհի 24 երկրից:

Կրթական բաղադրիչի շրջանակներում դասընթացներ են անցկացվել Հայ-ռուսական համալսարանում, «Teach for Armenia» և «Birthright Armenia» հիմնադրամների դասավանդողների, ինչպես նաև ՀԲԸՄ հայկական վիրտուալ համալսարանի ուսուցիչների միջոցով:

Ճանաչողական բաղադրիչը թույլ է տվել մասնակիցներին ծանոթանալ Գառնի, Գեղարդ, Սարդարապատ, Խոր վիրապ, Օշական, Հաղարծին ու Չվարթնոց հուշարձաններին, Հայաստանի լավագույն թանգարաններին: Բացի դրանից, «Թումո» կենտրոնում, «Այբ» դպրոցում, ՀԲԸՄ վիրտուալ համալսարանում, նաև այլ բուհական աղբյուրներից մասնակիցները հնարավորություն են ստացել տեղեկանալու Հայաստանում կրթություն ստանալու հնարավորություններին:

Հանդիպումներ են տեղի ունեցել նաև պետական այրերի, կրթական և մշակութային գործիչների, հայրենադարձների, Հայաստանում կամավորական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ, այցելել են Հայոց ցեղասպանության հուշահամալիր և Եռաբլուր, հայրենական արտադրության գործարաններ, ծանոթացել հայկական բանակի առօրյային և այլն:

Ծրագիրն ավարտվել է ճամբարային եռօրյա հանգստով՝ հազեցած «All Inclusive Armenia» ընկերության կողմից կազմակերպված ժամանցային, մարզական և մշակութային միջոցառումներով:

3. «ՆերՈՒԺ» սփյուռքի երիտասարդների ստարտափ ծրագիր

Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և ՀՀ սփյուռքի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1261-Ն որոշմամբ, որով, մասնավորապես, ապահովվել է սփյուռքի երիտասարդների «ՆերՈՒԺ» սթարթափ ծրագրի համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը:

Ծրագրի նպատակն է Սփյուռքի հայազգի ձեռներեցների համար հնարավորություն ստեղծել սթարթափեր բերելու Հայաստան և բարելավելու երկրում սթարթափերի էկոհամակարգը: Ծրագրի թիրախային ոլորտներն են՝

- գյուղատնտեսություն,
- զբոսաշրջություն,
- սոցիալական ոլորտ և կրթություն,
- տվյալների վերլուծություն և սմարթ քաղաքներ,
- մաքուր միջավայր և առողջապահություն,
- ֆինանսական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային առևտուր:

Սփյուռքահայ երիտասարդների «Ներուժ» ստարտափ ծրագիրն իրականացվում է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST), «UWC Դիլիջան» քոլեջի, «IDeA» հիմնադրամի, «Impact Hub Հայաստան»-ի, «Հայկական Կարիտաս»-ի, Ռուս-հայկական համալսարանի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «ImpactAim»-ի, «Դեպի Հայք»-ի, «Արտ Լանչ»-ի և GG տաքսի ծառայության հետ համագործակցությամբ:

Ծրագրի ավարտական փուլն անցկացվում է Հայաստանում՝ UWC Դիլիջան քոլեջում 2018 թվականի դեկտեմբերի 17-20-ը, որին մասնակցել են 27 երկրներից 71 ստարտափ գաղափար ներկայացնող մոտ 140 մասնակից, ընդ որում 51 ստարտափ գաղափար ներկայացվել է Սփյուռքից:

Ծրագրի ավարտական փուլի հիմնական նպատակներն են՝

- Ստեղծել Հայաստանում ձեռնարկատիրությամբ զբաղվելու հարթակ և հնարավորություններ՝ ծագումով հայ երիտասարդ ձեռներեցների համար
- նպաստել էկոհամակարգի կայացմանը և կառուցել ստարտափների համար կայուն և առողջ միջավայր
- ապահովել կիրառելի ուղենիշեր, որոնք թույլ կտան կառուցել արժեք ստեղծող և կոմերցիոն առումով կենսունակ ու ճկուն ստարտափ ձեռնարկություններ
- զարգացնել և կիրառել ստարտափ բիզնեսի վարման հիմնարար հմտություններ
- ստեղծել համագործակցության և ֆինանսավորման հնարավորություններ:

Դեկտեմբերի 20-ին ընտրվելու են ծրագրին մասնակից այն ստարտափները (մինչև 10 ծրագիր), որոնց հատկացվելու են դրամաշնորհները: Դրամաշնորհները տրամադրելու են Սփյուռքի նախարարությունը, «Հայկական Կարիտաս»-ն, Ռուս-հայկական համալսարանը, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «ImpactAim»-ն:

4. Հայրենադարձության գործընթացը խթանող ծրագրերի մշակում, հայրենադարձության գործընթացի կազմակերպման ռազմավարության մշակում, ոլորտի օրենսդրության կատարելագործում

4.1. Կատարվել է հայրենադարձության կազմակերպման գործընթացի ռազմավարական փաստաթղթի մշակում, առանձին դրույթների ու բաժինների քննարկում, որի արդյունքում մի քանի օրինակով տպագրվել է փաստաթղթի նախագիծը:

4.2. Նոյեմբերի 29-ին ՀՀ սփյուռքի նախարարությունում կայացել է Հայրենադարձության հիմնախնդիրների Աշխատանքային խմբի հանդիպում-քննարկում, որին մասնակցել են պետական (ԱԳՆ, ԿԳՆ, ՏԿԶՆ ՄՊԾ, ՊԵԿ, Ոստիկանության ԱՎՎ, Աշխատանքի և սոցապահովության, Արդարադատության, Առողջապահության նախարարություններ), ՄՄԿ հայաստանյան ներկայացուցչության և հասարակական կառույցների (Վերադարձ Հայաստան, Դեպի Հայք, Կառուցիր Հայաստան, ՀԲԸՄ, ՖՀԶՀ, Idea հիմնադրամ) ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվել են հայրենադարձներին մաքսային ու հարկային, կրթական ու առողջապահական արտոնությունների անհրաժեշտ շրջանակները, օրենսդրական կարգավորումներին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

4.3. Կազմվել և պարբերաբար համալրվել է ՀՀ-ում հաստատված հայրենադարձների տվյալների բազան (նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև առանձին հասարակական կազմակերպություններից ստացված տվյալների հիման վրա): 2018 թվականի ընթացքում Հայաստանում հաստատվել են հարյուրավոր ընտանիքներ, որոնց գերակշիռ մասը՝ ավելի քան 450 ընտանիք, Հայրենիք է տեղափոխվել Թավշյա հեղափոխությունից հետո: ՀՀ Սփյուռքի նախարարություն այցելել, նամակագրական կան և հեռախոսային կապի միջոցով իրավական խորհրդատվություն, օգնություն են ստացել ավելի քան 500 հայրենադարձներ:

4.4. Իրականացվել է «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթների մշակման աշխատանքներ:

4.5. Պատրաստվել է Հայրենադարձության խնդրով ստացվող էլեկտրոնային դիմումների համար պատասխանի ձևանմուշ:

4.6. Պարբերաբար կատարվում է հայրենադարձության գործընթացի նախապատրաստման, խթանման, իրականացման ու ինտեգրման ծրագրերի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն:

5. Հայապահպանության համար և ուժացման դեմ պայքարում Սփյուռքի երիտասարդության շրջանում հայոց լեզվի իմացության մակարդակի բարձրացում

5.1. Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում

Սփյուռքում գործող կրթական հաստատություններին անհրաժեշտ ուսումնական գրականությամբ և օժանդակ նյութերով ապահովելու նպատակով 2018 թվականին նախարարությունը 32 երկրի 334 հայկական կրթօջախներ են ուղարկվել 56.015 կտոր գրականություն, որի մեծ մասն առաքվել է համայնքների ղեկավարների, դպրոցների ներկայացուցիչների միջոցով, իսկ մնացած մասն առաքվել է փոստով:

5.2. Սփյուռքյան նոր դպրոցների ստեղծում

Սփյուռքյան համայնքների, մանկավարժների, կազմակերպությունների՝ մեկօրյա դպրոցների ստեղծման աջակցությանն ուղղված աշխատանքների արդյունքում գրանցվել են նոր մեկօրյա 17 դպրոց՝ 9 երկրում: Նորաստեղծ դպրոցներին տրամադրվում են դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, ուսումնաօժանդակ և դիդակտիկ նյութեր:

5.3. Ուսուցիչների վերապատրաստում Սփյուռքում

Աբխազիայում կազմակերպվել է դասվարների և հայոց լեզվի և գրականության 94 ուսուցիչների վերապատրաստման դասընթաց՝ Հայաստանից գնացած մասնագետների կողմից:

Կազմակերպվել է ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ Նիդերլանդների Ալմելո քաղաքի Սուրբ Գրիգոր Լուավորիչ եկեղեցու Սուրբ Մեսրոպ Մաշտոց Հայկական դպրոցում Հայաստանից գործուղված մասնագետների կողմից:

5.4. «Քույր դպրոցներ» ծրագիր

Սփյուռքի դպրոցների գործունեությանն աջակցության նպատակով իրականացվող «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում 2009 թվականից սկսած համագործակցություն է հաստատվել 50-ից ավել հայաստանյան և սփյուռքյան կրթօջախների միջև, ըստ որի պայմաններ են ստեղծվում ուսումնամեթոդական, կրթական մշակութային, ուսուցիչների միջև փորձի փոխանակման, մայրենի լեզվի պահպանման և տարածման, երիտասարդ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության խնդիրների լուծմանն աջակցության համատեղ ծրագրերի, միջոցառումների իրականացման համար: «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում 2018 թվականին Սփյուռքի 3 կրթօջախի և Հայաստանի 3 դպրոցի միջև կնքվել են համագործակցության հուշագրեր:

5.5. Մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ

Փետրվարի 21-ին Մայրենիի օրվա կապակցությամբ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվել է այցելություն Մեսրոպ Մաշտոցի շիրիմին, այնուհետև Օշականի եկեղեցու դպրատանը տեղի է ունեցել մայրենիին նվիրված ավանդական միջոցառում՝ Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոցի աշակերտների և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի օտարազգի ուսանողների մասնակցությամբ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում փետրվարի 21-ին տեղի է ունեցել ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով 2016-2017թթ. հրատարակված 5 գրքերի շնորհանդեսը: Այնուհետև տեղի է ունեցել արևմտահայերենի խնդիրներին նվիրված կլոր-սեղան քննարկում: Քննարկման թեմաներն էին արևմտահայերենի պահպանումը և պաշտպանությունը, զարգացումն ու տարածումը, գործառության ոլորտների ընդլայնումը, կանոնարկումը, ուսուցումն ու ուսումնասիրումը, արևմտահայերենի և արևելահայերենի միասնական զարգացումը, փոխհարստացումը:

Աշխատանքներ են տարվել Մայրենիին նվիրված միջոցառումների կազմակերպմանը համայնքներում, դպրոցներում և հավաքվել են միջոցառումների մասին նյութեր, հոդվածներ, տրամադրվել «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականին: Նյութերը լուսաբանվել են: Ընդհանուր առմամբ, տարբեր տարածաշրջաններում իրականացվել է ավելի քան 170 միջոցառում:

5.6. AVC վիրտուալ համալսարան

Մայրենի լեզվի հեռավար ուսուցման ծրագրերում կարևորվում է ՀԲԸՄ վիրտուալ համալսարանի գործունեությունը՝ որպես օնլայն-հեռավար կրթության վերջին զարգացումները կրող լեզվուսուցման կայուն կենտրոն: Հեռավար այս համալսարանի միջոցով իրականացվում են հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) և մշակութային կրթության ուսումնական ծրագրեր՝ տարվա մեջ 4 ենթաշրջաններով: AVC վիրտուալ համալսարանի ուսուցման ենթաշրջանների մասին տեղեկատվություններն առաքվել են Սփյուռքի համայնքային, կրթամշակութային, երիտասարդական կազմակերպություններին, տեղադրվել ՀՀ սփյուռքի նախարարության կայքերում:

6. Համահայկական մշակութային փառատոն

Համահայկական մշակութային փառատոնի շրջանակներում հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

6.1. Պարարվեստի օրեր – մասնակցել են Սփյուռքի 9 երկրից ժամանած 12 պարախումբ: Պարախումբերը ելույթներ են ունեցել Հայաստանի և Արցախի համերգային սրահներում և մշակութային օջախներում: Բացի այդ, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել Ստամբուլի «Մարալ» երգի-պարի համույթի 80-ամյակին նվիրված հորեյանական համերգը:

6.2. Երգչախմբային արվեստի օրեր - Հայաստանի Երաժշտական ընկերության դահլիճում տեղի է ունեցել Էստոնիայի Տալլին քաղաքի «Երազանք» և Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու Յորք քաղաքի «Աստղիկներ» երգչախմբերի համատեղ համերգը:

6.3. Ասմունքի համահայկական փառատոն Շուշիում – մասնակցել են Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ուսումնական հաստատությունները ներկայացնող 140 պատանի և աղջիկ, որից 31-ը սփյուռքահայ՝ 4 երկրից:

6.4. «Հայ երգի օր» - ներկայացվել է պոլսահայ կոմպոզիտոր Մաժակ Թոշիկյանի «Սասունցիների պարը» բեմադրությունը, որի ստեղծագործության խորեոգրաֆիկ և պարային մասը իրականացվել է հայաստանաբնակ արտիստների հետ միասին:

Ընդհանուր առմամբ փառատոնին մասնակցել է 405 հոգի՝ 11 երկրից:

7. Համաժողովներ, գիտաժողովներ

7.1. «Հայոց ցեղասպանության պատճառով հայության կրած նյութական վնասները. «Լքյալ գույք» և հայրենագրկում» խորագրով գիտաժողով

Մարտի 16-ին ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հայոց ցեղասպանության պատճառով հայության կրած նյութական վնասները. «Լքյալ գույք» և հայրենագրկում» թեմայով գիտաժողովը, որին մասնակցել են անվանի գիտնականներ, իրավաբաններ, թուրքագետներ, պատմաբաններ, ցեղասպանագետներ:

7.2. «Հայաստանի Հանրապետություն - 100» միջազգային գիտաժողով

Մայիսի 25-26-ը Երևանում տեղի է ունեցել միջազգային գիտաժողով՝ «Հայաստանի Հանրապետություն - 100» խորագրով: Այն կազմակերպել էին ՀՀ սփյուռքի նախարարությունը, Գիտությունների ազգային ակադեմիան (ԳԱԱ) և Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ): Գիտաժողովին մասնակցել են շուրջ 70 հայ և օտարազգի գիտնականներ:

7.3. «Հայաստանի Հանրապետությունը և Հայ Եկեղեցու դերակատարությունը հայոց պետականության կայացման գործում (1918-2018 թթ.)» խորագրով գիտաժողով

Մայիսի 22-ին ՀՀ սփյուռքի նախարարության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետությունը և Հայ Եկեղեցու դերակատարությունը հայոց պետականության կայացման գործում (1918-2018 թթ.)» խորագրով գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության և Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակներին: Գիտաժողովին մասնակցել են ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիներից, տարբեր գիտական, կրթական հաստատություններից:

7.4. Լրագրողների համահայկական 9-րդ համաժողով

Մայիսի 30-ից հունիսի 1-ը Երևանում կայացել է «Հայոց պետականությունը և հայ լրագրությունը» խորագրով Լրագրողների համահայկական 9-րդ համաժողովը, որին մասնակցել են Հայաստանից, Սփյուռքից և Արցախից 100-ից ավելի քան լրագրող 14 երկրից, որից 40-ը գլխավոր խմբագիր: Համաժողովին ընդհանուր առմամբ ելույթ է ունեցել 30 հոգի, հարակից ելույթներով և առաջարկներով հանդես եկել 50-ից ավելի մասնակից:

Համաժողովի վերջին օրը՝ հունիսի 1-ին, մասնակիցները հանդիպել են ՀՀ արտաքին գործերի և կրթության և գիտության նախարարների հետ:

7.5. Մխիթարյան միաբանության «Բազմավէպ» հայագիտական, բանասիրական, գրական հանդեսի 175-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով

Հոկտեմբերի 19-20-ը ՀՀ ԳԱԱ-ում Սփյուռքի նախարարության, Գիտությունների ազգային ակադեմիայի և Մխիթարյան միաբանության նախաձեռնությամբ տեղի է ունեցել Մխիթարյան միաբանության «Բազմավէպ» հայագիտական, բանասիրական, գրական հանդեսի 175-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը, որին մասնակցել է 50 գիտնական և հոգևորական աշխարհի 8 երկրից:

8. Տարածաշրջանային ծրագրեր

8.1. «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին»

Մարտի 26-ից ապրիլի 26-ը կազմակերպվել է պարուսույց Լուսինե Առաքելյանի այցը Ավստրալիա Սիդնեյի և Մելբուռնի հայկական պարախմբերին վերապատրաստելու նպատակով:

Օգոստոսի 2-15-ը կազմակերպվել է երգիչներ Սոնա Ռուբենյանի և Սևակ Ամրոյանի այցը Արգենտինա, Ուրուգվայ և Բրազիլիա՝ Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի կապակցությամբ համերգներ ունենալու նպատակով:

Նոյեմբերին Ավստրալիայում կազմակերպվել է երգչուհի Լիանա Ալավերդյանի համերգը:

Դեկտեմբերին կազմակերպվել է քանդակագործ Արտակ Համբարձումյանի, երգչուհի Գաբրիելա Գալոյանի և նրան ուղեկցող երեք երաժիշտների այցը Ավստրալիա:

8.2. «Աջակցություն մերձավոր սփյուռքին» ծրագիր

Ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել Վիրահայոց թեմի Թբիլիսիի Սբ. Էջմիածին եկեղեցուն կից գործող «Հայարտուն» և Սամցխե-Ջավախք - Ծալկայի փոխառաջնորդարանին կից կրթամշակութային կենտրոններին և կրթական, մշակութային և համայնքային կառույցների նյութատեխնիկական բազայի արդիականացմանը:

2018 թվականին իրականացվել են նաև «Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» և «Աջակցություն Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը» ծրագրերը:

8.3. Ստամբուլի հայ համայնքի օրեր

«Ստամբուլի հայ համայնքի օրերի» շրջանակներում իրականացվել է 7 միջոցառում Երևանում.

- «Մարալ» երգի ու պարի անսամբլի համերգը
- «Ոմանք» ռոք խմբի համերգը Երևանում, Գյումրիում և Վանաձորում
- Ժուլիա Մութույի տարազներով լուսանկարների ցուցահանդեսը Թեքեյան հիմնադրամի ցուցասրահում
- Մուրատ Էզերի լուսանկարների ցուցահանդեսը Թեքեյան հիմնադրամի ցուցասրահում
- Մաժակ Թոշիկյանի համերգը Գ. Սունդուկյանի անվան թատրոնում
- Արթուր Բաղդասարյանի և Էդվին Գալիփյանի համերգը Կոմպոզիտորների միության համերգասրահում
- «Ժամանակ» օրաթերթի շնորհանդեսը ՀԲԸՄ-ի սրահում:

8.4. Սփյուռքյան համայնքներում Երևանի 2800-ամյակին նվիրված «Երևանը՝ երեք հանրապետությունների մայրաքաղաք» լուսանկարների ցուցահանդեսների կազմակերպում

Սփյուռքի նախարարությունը, համագործակցելով Սփյուռքի համայնքային կառույցների և դիվանագիտական ներկայացուցիչությունների հետ, Լիբանանում, ԱՄԷ-ում, Հորդանանում, Ղազախստանում, Ռուսաստանում կազմակերպել է Երևանի 2800-ամյակին նվիրված «Երևանը՝ երեք հանրապետությունների մայրաքաղաք» լուսանկարների ցուցահանդեսներ:

8.5. Սփյուռքում «Հայաստանի Հանրապետություն և Մայիսյան հերոսամարտեր - 100» խորագրով միջոցառումների կազմակերպմանն աջակցություն

Սփյուռքի նախարարության աջակցությամբ Սփյուռքի մի շարք համայնքներում կազմակերպվել են «Հայաստանի Հանրապետություն և Մայիսյան հերոսամարտեր - 100» խորագրով միջոցառումներ, որոնք լուսաբանվել են նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում:

9. Սփյուռքագիտական հետազոտությունների իրականացում

ՀՀ սփյուռքի նախարարությունը ՀՀ ԳԱԱ տարբեր ինստիտուտներին, Երևանի պետական համալսարանին, «Նորավանք» ԳԿՀ-ին, Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամին և գիտական այլ հաստատություններին պարբերաբար տրամադրում է գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող թեմատիկ հետազոտությունների պատվերներ:

Նախարարության կողմից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 2018 թվականին տրամադրվել է 12 գիտական թեմայի պատվեր, որից 11 հետազոտությունները սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ սփյուռքի նախարարություն, իսկ վերջին 1 թեմայի ուսումնասիրության կատարման վերջնաժամկետը սահմանված կարգով և ներկայացված հիմնավորումների հիման վրա երկարացվել է մինչև 2019թ. առաջին եռամսյակ:

10. Աշխատանքներ համահայկական կառույցների հետ

10.1. Հուլիսի 20-29-ը Հայաստանում տեղի է ունեցել Հայ մարմնակրթական ընդհանուր միության հիմնադրման 100-ամյակին նվիրված տոնակատարություններ և 11-րդ քանակում: Հայաստան են ժամանել 24 երկրի 26 շրջանից՝ 3000 ՀՄԸՄ-

ականներ, որոնցից 1200 սկաուտներ մասնակցել են նաև Բյուրականի կենտրոնական բանակավայրում կազմակերպվող բանակումին:

ՀՀ վարչապետի 2018թ. փետրվարի 16-ի N 146-Ա «Հայ մարմնակրթական ընդհանուր միության հիմնադրման 100-ամյակին նվիրված տոնակատարությունները և 11-րդ բանակումը կազմակերպելու նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որին հանձնարարվել է կազմակերպել հանձնաժողովի աշխատանքները և ապահովել Հայ մարմնակրթական ընդհանուր միության հիմնադրման 100-ամյակին նվիրված տոնակատարությունների և 11-րդ բանակումի իրականացումը: Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահին եղել է ՀՀ սփյուռքի նախարարը:

10.2. Համազգային հայ կրթական և մշակութային միության միջև 2014թ. կնքված համագործակցության հուշագրի համաձայն 2018 թվականին կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ:

Մայիսի 22-29-ը կայացել են Համազգային հայ կրթական և մշակութային միության Լիբանանի «Գասպար Իփէկեան» թատերախմբի հյուրախաղերը Հայաստանում նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության 100 և Համազգայինի հիմնադրման 90-ամյակներին:

Հուլիսի 4-ին Ստեփանակերտում և հուլիսի 5-ին Մարտունիում ՀՀ սփյուռքի նախարարության, Համազգայինի նախաձեռնությամբ և Արցախի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ տեղի են ունեցել Համազգային հայ կրթական և մշակութային միության «Նաիրի» պարախմբի համերգը: «Նաիրի» պարախումբը մասնակցել է Համահայկական մշակութային փառատոնին:

10.3. ՀՀ սփյուռքի նախարարության և Հայ օգնության միության միջև 2015թ. կնքված համագործակցության հուշագրի համաձայն կողմերը նախատեսել են Հայրենիք-Սփյուռք գործակցության շրջանակներում իրականացնել մշակութային, կրթական, սոցիալական, առողջապահական և քարոզչական ծրագրեր:

Նախարարությունն աջակցել է ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության «Լավագույն ուսանող» ծրագրի իրականացմանը, որի շրջանակներում Հայաստանի սահմանամերձ համայնքներից 100 ուսանող արժանացել են մրցանակի: Ծրագրում ներառվել են նաև 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած և զինհաշմանդամություն ձեռք բերած ուսանողները:

Մայիսի 24-ին Հայ օգնության միության նախաձեռնությամբ և Սփյուռքի նախարարության աջակցությամբ ԵՊՀ դահլիճում կայացել է «Հայ կանանց դերը

զարթոնքից առաջ» ՀՕՄ-ի միջազգային խորհրդատուները, որը նվիրված է եղել Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին:

10.4. Հունվարի 26-ին տեղի է ունեցել ՍԴՀԿ 130-ամյակին նվիրված և ՍԴՀԿ Հայաստանի կազմակերպության 11-րդ համագումարի բացման արարողությունը, որի բացմանը ՀՀ սփյուռքի նախարարը փոխանցել է ՍԴՀԿ կազմավորման 130-ամյակի կապակցությամբ ՀՀ Նախագահի ուղերձը:

Սեպտեմբերի 22-ին Հայաստանում տեղի է ունեցել ՍԴՀԿ Հայ մարմնամարզական միության (ՀՄՄ) 9-րդ պատգամավորական ժողովը՝ ավելի քան 60 սփյուռքահայ անդամների մասնակցությամբ, որի կազմակերպման աշխատանքներին աջակցել է Սփյուռքի նախարարությունը:

Սեպտեմբերի 23-ին Հանքավանում տեղի է ունեցել ՍԴՀԿ Հայ մարմնամարզական միության սկաուտական «Բանակում» ճամբարի փակման արարողությունը, որին մասնակցել են աշխարհի 8 երկրից՝ շուրջ 100 մասնակից: Բանակումի փակման հանդիսությանը մասնակցել են նաև Սփյուռքի նախարարության աշխատակիցները:

10.5. Նախարարությունն աջակցություն է ցուցաբերել ՌԱԿ «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի կողմից իրագործվող մշակութային և կրթական ծրագրերին: Նախարարը պարբերաբար ընդունել է ՌԱԿ անդամներին:

2018 թվականին նախարարությունը շարունակել է համագործակցել 44 համահայկական կառույցների հետ, այդ թվում 3 հոգևոր կառույցների, 3 ավանդական կուսակցությունների և 12 համահայկական ընկերակցությունների հետ:

Տարվա ընթացքում ՀՀ սփյուռքի նախարարը և նախարարության աշխատակիցները հանդիպել են համահայկական կառույցների ղեկավարների և ներկայացուցիչների հետ, քննարկել Հայաստան-Սփյուռք գործակցությանն առընչվող բազմաթիվ հարցեր:

11. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը Հայրենիք-Սփյուռք գործակցության զարգացման գործում

11.1. «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերական

Նախարարության կազմավորումից ի վեր ստեղծվել և թողարկվում է «Հայերն այսօր» www.hayernaysor.am ամենօրյա էլեկտրոնային պարբերականը 4 լեզվով՝ արևելահայերեն, արևմտահայերեն, ռուսերեն, անգլերեն:

«Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում 2018 թվականին հրապարակվել է 2884 նյութ, որից՝

- Նորություններ - 2730
- Հարցազրույց - 51
- Հոդված - 74
- Հայրենադարձներ - 29:

«Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում բացվել է 3 նոր խորագիր՝ «Ռազմավարության նախագիծ», «Հայաստանի Հանրապետություն և Մայիսյան հերոսամարտեր - 100» և «Քայլ դեպի տուն»:

11.2. Էլեկտրոնային գրադարան

ՀՀ կառավարության 2011թ. մարտի 10-ի N 211-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» ծրագրի շրջանակներում համացանցում առկա հայերեն գրականությունը և հայալեզու ուսումնական և գիտահանրամատչելի նյութերի քանակության բացը լրացնելու նպատակով մշակվել և գործարկվում է սփյուռքի նախարարության «Էլեկտրոնային գրադարան» նախագիծը (www.lib.mindiaspora.am): Գրադանում տեղադրվում են նաև ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, պատվերով և աջակցությամբ հրատարակվող գրքերը:

2018 թվականին libmindiaspora.am կայքում թվայնացվել և տեղադրվել է մոտ 31 000 էջ նյութ, 112 ամբողջական գիրք, այդ թվում 2017 թվականին նախարարության պատվերով հրատարակված գրքերը:

11.3. Արևմտահայերենից՝ արևելահայերեն և հակառակը փոխարկիչ

Շարունակվել են «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը» փոխվերձանող ծրագրի կատարելագործման ուղղությամբ և իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Փոխարկչի գիտելիքների բազան հարստացվել է 4000 հասկացույթով:
- Փոխարկչի գիտելիքների բազայում կատարվել է 5800 կապերի ճշգրտում:
- Փոխարկչի բառարաններում ավելացվել է ավելի քան 31000 բառ 8 լեզվով:

11.4. Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարան

Հայկական սփյուռքի պատմության վիրտուալ թանգարանում (www.armdiasporamuseum.com) տեղադրվում են Սփյուռքի հայկական համայնքների, համահայկական կազմակերպությունների ու հոգևոր կառույցների, Հայաստանի, Հայ դատի վերաբերյալ նյութեր, հայկական անձնանունների և ազգանունների բառարաններ, ներկայացվում է հայկական մշակութային ժառանգությունն ու նվաճումները,

մեծանուն հայորդիների ներդրումները համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Թանգարանում տեղադրվել է մոտ 400 նյութ և 750 լուսանկար:

11.5. Հայաստան-Սփյուռք թեմատիկ տեսակոնֆերանսների, համացանցային հեռարձակումների և ասուլիսների կազմակերպում

ՀՀ սփյուռքի նախարարության ղեկավարությանը և կառուցվածքային ստորաբաժանումներին սփյուռքի համայնքների խնդիրներին անմիջական շփման միջոցով ծանոթացնելու նպատակով նախարարությունը տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ պարբերաբար հայ համայնքների ամենատարբեր կառույցների, լրատվամիջոցների, համահայկական ընկերակցությունների, դպրոցների և համայնքի ներկայացուցիչների հետ կազմակերպվում են տարբեր թեմաներով հեռավար տեսաժողովներ, խորհրդակցություններ:

2018 թվականին, ըստ նախապես հաստատված տարեկան ժամանակացույցի, կազմակերպվել է 14 տեսակոնֆերանս 21 երկրի (ԱՄՆ, Իրան, Ուկրաինա, Թուրքիա, Ռուսաստան, Արգենտինա, Կանադա, Բելգիա, Ավստրիա, Ֆրանսիա, Չեխիա, Հունաստան, Կիպրոս, Հունգարիա, Իտալիա, Բուլղարիա, Լիբանան, Հորդանան, Սիրիա, Քուվեյթ, Ուրուգվայ, Հնդկաստան) հայ համայնքների ներկայացուցիչներ հետ:

Հեռակոնֆերանսների ընթացքում համայնքների կողմից բարձրացված հարցերը դուրս են բերվել, կազմվել է համապատասխան աշխատանքային-ծրագիր, որն իրականացվում է սահմանված ժամկետներում:

12. Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում հեռարձակվել են հետևյալ հեռուստահաղորդումները և ֆիլմերը՝

- «Մերոնք» - 52 հեռուստահաղորդում (<1 հեռուստաընկերություն),
- «Սփյուռքի ժամ» - 30 հեռուստահաղորդում (<1 հեռուստաընկերություն),
- «Հայ սփյուռք» - 4 ֆիլմ (<1 հեռուստաընկերություն),
- «Հայկական հետք» - 20 հեռուստահաղորդում («Երկիր մեդիա» հեռուստաընկերություն),
- «Աշխարհասփյուռ» - 20 հեռուստահաղորդում («Արմենիա» հեռուստաընկերություն):

13. Իրավական ակտերի ընդունում

Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ ընդունվել է 14 նորմատիվ իրավական ակտ, որից՝

- ՀՀ կառավարության որոշում - 9
- ՀՀ վարչապետի որոշում - 5:

Կառավարության և հանրապետական գործադիր մարմինների կողմից առաջարկություններ և դիտողություններ հայտնելու նպատակով Կառավարության և հանրապետական գործադիր մարմինների կողմից ներկայացվել են 231 իրավական ակտերի նախագծեր: Նշված իրավական, ինչպես նաև գաղտնի ակտերի նախագծերի վերաբերյալ շահագրգիռ հանրապետական գործադիր մարմիններին ներկայացվել են 168 առաջարկություններ՝ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Կառավարության և հանրապետական գործադիր մարմիններից ստացվել է տարբեր բնույթի տեղեկատվություններ տրամադրելու, միջոցառումներ կազմակերպելու վերաբերյալ 113 գրություն:

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության գործառույթներին վերաբերող Հայաստանի Հանրապետության վարչապետի 62 հանձնարարական կատարվել է առանց թերությունների և ժամկետից շուտ:

Կնքվել են փոխըմբռնման 5 հուշագրեր տարբեր կազմակերպությունների հետ (Հայ-Ռուսական համալսարան, «Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամ, ՀԲԸՄ Հայկական վիրտուալ համալսարան, «ՋիՋի» ՓԲԸ և «Ինտերնետ Պրոջեքտս» ՍՊԸ):

14. Գործուղումներ

Բազմաբնույթ խնդիրների լուծման, փոխճանաչման, կապերի հաստատման, ծրագրերի քննարկման, տարբեր միջոցառումների իրականացման նպատակով նախարարության աշխատակիցները գործուղումների են մեկնել 12 երկիր: Ընդհանուր առմամբ աշխատակիցների մասնակցությամբ եղել է 24 գործուղում, որից 5-ը՝ ՀՀ սփյուռքի նախարարը:

15. Ուսանողների պրակտիկայի կազմակերպում

Նախարարությունում ուսումնական պրակտիկա է անցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բուհերի 79 ուսանող, որից՝

- Երևանի պետական համալսարան - 50
- Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան - 2
- Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ - 16
- Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա - 10

- ՀՀ պետական կառավարման ակադեմիա - 1:

16. ՀՀ սփյուռքի նախարարության տեղեկատվական քաղաքականությունը

16.1. Պատրաստվել և տարածվել է 345 մամուլի հաղորդագրություն: Բոլոր հաղորդագրությունները տեղադրվել են Սփյուռքի նախարարության պաշտոնական կայքում:

16.2. Նախարարության գործունեությունը լուսաբանելու նպատակով հավատարմագրվել է 10 հայաստանյան լրատվամիջոցի 42 լրագրող:

16.3. Տարբեր կառույցներից և անհատներից ստացվել է տեղեկատվության ստացման 54 հարցում: Բոլոր հարցումներին սահմանված ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

17. Փաստաթղթաշրջանառություն

Սփյուռքի նախարարությանում հաշվետու ժամանակահատվածում Mulberry համակարգով մուտքագրվել է 3849 գրություն, որից 898-ը քաղաքացիների դիմումներ են, նույն ժամանակահատվածում առաքվել է 2807 գրություն:

Նախարարության էլեկտրոնային փոստով ստացվել է 24.160 նամակ, ուղարկվել՝ 78.115:

Հաշվետու ժամանակահատվածում նախարարություն է այցելել 3258 քաղաքացի: